

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՄԻՔԱՅԵԼ ԱՐՈՒՏՉՅԱՆ. ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԷԶԵՐ

ՀԱՅԿՈՒՇ (ՀԱՅԿՈՒՀԻ) ՍԱՀԱԿՅԱՆ

արվեստաբան

*Հայաստանի ազգային պատկերասրահ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
haykouhie.sahakyan@gmail.com*

ՀՏԴ՝ 7.071.1; 659.133.11

DOI: 10.54503/1829-4278.2024.2-78

Անփոփագիր

1920–ական թվականներին Հայաստանում սկիզբ առած բուռն սոցիալ-քաղաքական փոփոխությունները, մշակութային վերելքն ու համընդհանուր զարթոնքի ալիքը այստեղ էին բերել բազում գործիչների, որոնք անմնացորդ ծառայեցին ի նպաստ հայրենի երկրի: Շատերի թվում Հայաստանում հաստատվեցին նաև գրող Եղիշե Չարենցն ու նկարիչ Միքայել Արուտչյանը: Լայն մտահորիզոնի և բազմակողմանի գիտելիքների տեր գաղափարակից այս արվեստագետների ուղիները հատվեցին ինչպես հասարակական գործունեության, այնպես էլ մշակույթի ամենատարբեր ոլորտներում՝ գրահրատարակչություն, կերպարվեստ, թատրոն, մամուլ և այլն:

Նրանց կյանքի հայտնի և անհայտ էջերի մասին պատմում են հուշերի պատառիկներն ու այս ստեղծարար համագործակցությունից ծնված արվեստի երկերը, որոնք տասնամյա բարեկամության խոսուն վկաներն են և այժմ պահվում են Գրականության և արվեստի թանգարանում, Եղիշե Չարենցի տուն-թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում և այլուր: Հայպետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Չարենցի առաջարկով Միքայել Արուտչյանը նկարազարդել է Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթը (1931), Միխայիլ Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն» (1933), Միգել Սերվանտեսի «Դոն Կիխոտ» (1934), Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» (1935) վեպերը, Ալեքսանդր Պուշկինի «Կապիտանի աղջիկը» (1936) վիպակը և գրական այլ գործեր: Այս ձևավորումներն, անկասկած, խորհրդային գրաֆիկայի արժեքավոր նմուշներից են:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Չարենց-Արուտչյան կապը՝ ըստ նրանց գործունեության ոլորտների, ինչպես նաև գիտական շրջանառության մեջ դնել նորահայտ աշխատանքներն ու տեղեկությունները, որոնք կարևոր աղբյուր կարող են լինել հետագա հետազոտությունների համար: Համեմատական և վերլուծական մեթոդները թույլ են տալիս տեսնելու նրանց ստեղծագործական մոտեցումների ընդհանրությունները, որոնք բնորոշ էին նաև 1920–30–ականների խորհրդահայ մշակույթին: Արխիվային փաստաթղթերի, այդ թվում՝ երբևէ չհրապարակված նյութերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու բացառիկ աղբյուրներ, ինչպիսիք են գրաֆիկական աշխատանքները, մակագրությունները, ձեռագրերը և այլն՝ նպաստելով Չարենցի և Արուտչյանի հարաբերությունների լուսաբանմանը: Այս ուսումնասիրության շրջանակներում դիտարկվում են թե՛ հանրաժանոթ, թե՛ երբևէ չհրապարակված թանգարանային առարկաներ ու արխիվային նյութեր, արդյունքում կատարվել են կարևոր որոշարկումներ, ստեղծագործությունների տվյալների ճշգրտում և այլն:

Բանալի բառեր. Եղիշե Չարենց, Միքայել Արուտչյան, «Երկիր Նաիրի», գրքային գրաֆիկա, հայկական բեմանկարչություն, Հայպետհրատ, Գոսլիտիզդատ, Առաջին պետթատրոն, խորհրդային արվեստ, խորհրդահայ արվեստ

Հայ մեծագույն պոետ, թարգմանիչ, մշակութային ու հասարակական գործիչ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյա հոբելյանն անշուշտ կարևոր իրադարձություն էր համայն հայության մշակութային կյանքում: Այն ևս մեկ հրաշալի առիթ էր նրա թողած գեղարվեստական ժառանգության ուսումնասիրության, վերաբժնորման և հետահայաց բացահայտումների համար: 2022 թվականը հոբելյանական էր ոչ միայն Չարենցի, այլ նաև նրա բարեկամ, համախոհ արվեստագետ Միքայել Արուտչյանի (1897–1961) համար, որի հետ, հասակակից և մտերիմ ընկերներ լինելուց զատ, Չարենցը կապված էր նաև ստեղծագործական թելերով: Թե՛ Արուտչյանին, թե՛ Չարենցին միավորում էին քաղաքական հայացքներն ու նորաստեղծ վարչակարգի կազմում հայրենի երկրին ծառայելու անսպառ եռանդը (սկ. 1):

1920–ականների խորհրդահայ մշակույթն ու Չարենցի դերը

1920–ական թվականներին Հայաստանում սկիզբ առած մշակութային զարթոնքի ալիքն այստեղ էր բերել աշխարհասփյուռ բազում գործիչների, որոնց թվում էին Եղիշե Չարենցը և Միքայել Արուտչյանը: Նորա-

հաստատ խորհրդային վարչակարգն անչափ կարևորում էր մշակույթի զարգացումը՝ որպես գաղափարակերտման և հասարակության լայն շերտերի կրթական միջոց: Մշակույթն առանձնանում էր նոր ուղենիշներով, որոնց նպատակը նոր սոցիալիստական հասարակության ստեղծումն էր: Այս համատեքստում հառնում է Չարենցի ազդեցիկ կերպարը:

Եղիշե Չարենցը 1920-ականների հայ մշակույթի և գրականության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում ոչ միայն որպես բանաստեղծ և արձակագիր, այլ նաև որպես ակտիվ մշակութային գործիչ, որը ջանում էր խորհրդահայ արվեստին նոր որակներ հաղորդել: Ինչպես նկատում է Սուրեն Աղաբաբյանը՝ «Գեղարվեստական կյանքում այնքան մեծ էր Չարենցի կշիռը, որ անհրաժեշտաբար նա մասնակցում էր հայրենի մշակույթի գրեթե բոլոր ճյուղերի զարգացմանը, իր հոգեկան աշխարհի շռայլ սերմերն էր նետում մեծ աղետներից հետո պետականության և կայուն ապագայի տեր դարձած իր ժողովրդի մտավոր դաշտի ակունները»¹: Հայտնի է Չարենցի՝ կերպարվեստի, թատրոնի, երաժշտության և այլ ոլորտների խոր գիտելիքներն ու գործուն մասնակցությունը մշակութային իրադարձություններին, լայն թափ ստացած հրատարակչական գործին, նոր հաստատությունների ստեղծմանը: Չարենցը կանգնած էր մշակույթի այն նորացման շարժման կենտրոնում, որը միտված էր ժողովրդական արժեքների վերաիմաստավորմանը և դասական արվեստի վերաինտեգրմանը խորհրդային գաղափարախոսության շրջանակներում:

Կարսում ծնված Չարենցը երկար ուղի անցնելուց հետո 1919-ի դեկտեմբերին՝ Նիկոլ Աղբալյանի (1875-1947)² հրավերով եկել էր Երևան և հաջորդ տարվա հունվարից աշխատանքի անցել Հանրային կրթության և արվեստի նախարարությունում՝ իր ստեղծագործական ուժն ու եռանդն ի սպաս դնելով հայրենի մշակույթի զարգացմանը: Շուիշիում ծնված, ապա Ռուսաստանում իրավաբանական և գեղարվեստական կրթություն ստացած Միքայել Արուտչյանի մարտական ուղին սկսվում է 1919-ին³, որին հաջորդում են ուսումնառության տարիները Եվրոպայում: Հանգամանքների բերումով Արուտչյանը Հայաստանում հաստատվել է

1 Աղաբաբյան Ս., *Եղիշե Չարենց*, Գիրք երկրորդ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1977, էջ181:

2 Հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ, 1919-20 թթ. Եղել Առաջին հանրապետության լուսավորության և արվեստի նախարար:

3 1919 թվականի վերջին Արուտչյանը կամավոր մեկնում է ռազմաճակատ և սկզբում որպես նկարիչ ընդգրկվում է Կարմիր բանակի հեծելազորային կորպուսում, որի ղեկավարը հայտնի գործիչ Հայկ Բժշկյանցն էր (հայտնի է «Գայ» մականունով): Այդ տարիներին նա մասնակցում է Ցարիցինյան, Հյուսիսկովկասյան մարտերին՝ հասնելով մինչև Լեհաստան: Հայաստանի

1925-ին և անմիջապես ներգրավվել հայաստանյան գեղարվեստական միջավայր՝ մասնավորապես պարբերական մամուլի, գրահրատարակչության և թատրոնի ոլորտ, որտեղ իր գործուն մասնակցությունն ու կարևոր դերն ուներ Եղիշե Չարենցը: Հիշենք, որ վերջինս էլ իր հերթին նոր էր վերադարձել եվրոպական ճամփորդությունից⁴ և նոր գիտելիքներով ու եռանդով լի՝ աշխատանքի էր անցել «Խորհրդային Հայաստան» թերթի, «Նորք» հանդեսի խմբագրություններում, որոնց էջերին տեղ էին գտնում իր ստեղծագործությունները, ինչպես նաև Արուտչյանի ծաղրանկարներն ու հոդվածները⁵: «Հազվագյուտ փոխըմբռնման վրա հիմնված նրանց բարեկամությունը սկսվել էր Արուտչյանի՝ Հայաստան գալու համարյա առաջին օրերից: Հիանալի տիրապետելով ռուսաց լեզվին, քաջատեղյակ լինելով ռուս գրականությանը, ֆրանսիացի և գերմանացի հեղինակներին կարդալով բնագրով, Արուտչյանը հայոց լեզվի և գրականության իր լավ իմացությունների համար մեծապես պարտական էր Չարենցին»⁶:

1920 թվականին Չարենցը զբաղեցնում է Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնի վարիչի պաշտոնը և իր առաջին բարեփոխումները սկսում հենց թատրոնի ոլորտից: Այդ տարիներին Պետթատրոնի⁷ խաղացանկը հարստացնելու նպատակով՝ նա պիեսներ է թարգմանում, հաճախ ներկա է գտնվում բեմադրություններին և քննադատական հոդվածներ գրում դրանց վերաբերյալ: Պետթատրոնից է սկիզբ առնում նաև Միքայել Արուտչյանի բեմանկարչական գործունեությունը Հայաստանում. 1928 թվականին նա նշանակվում է գլխավոր նկարիչ: Այնուհանդերձ, Արուտչյանի ստեղծագործական տաղանդը Չարենցի կողմից ամենաբարձր գնահատականի է արժանանում գրքային գրաֆիկայի բնագավառում, որտեղ էլ ծավալվում է նրանց սերտ համագործակցությունը:

ազգային պատկերասրահ, Հուլաձեռագրային բաժին, Մ. Արուտչյանի ֆոնդ, ինվենտար 125:

4 1924 թվականի նոյեմբերին Չարենցը Բաթումից շոգենավով մեկնում է Պոլիս, որտեղից էլ անցնում է Եվրոպա՝ շրջագայում Հունաստանում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլուր:

5 Միքայել Արուտչյանի հոդվածները տպագրվել են «Նորք» հանդեսի 1926 թվականի №2-ում, էջ 210-216 (Թանգարանային շինարարության ժամանակակից պրինցիպները և ՀԽՍՀ պետական թանգարանը) և 1927-ի №1-ում (ՀԽՍՀ պետական թանգարանի գեղարվեստական բաժնի մասին), էջ 235-242:

6 **Մազմանյան Ն.,** *Միքայել Արուտչյան*, Երևան, ՀՊՊ, № 1 տպարան, 1984, էջ 12:

7 Այժմ՝ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, հիմնադրվել է 1922 թվականին:

Չարենցի ներդրումը գրահրատարակչության ոլորտում և «Երկիր Նաիրիի» ռուսերեն առաջին հրատարակության ձևավորումները

1920-ական թվականներին հայ գրատպությունը նոր շունչ ու որակ ստացավ՝ դառնալով ՝ գաղափարական և գեղարվեստական կրթության կարևոր գործիք: Եղիշե Չարենցը կարևոր դեր խաղաց այս գործում՝ ներգրավվելով ոլորտի ամենատարբեր փուլերում՝ որպես խմբագիր, հրատարակիչ և գեղարվեստագետ: 1928 թվականին Հայպետհրատի գեղարվեստական ենթաբաժնի⁸ վարիչ Չարենցն իր շուրջն էր համախմբել արվեստագետների մի աստղաբույլ՝ Մարտիրոս Սարյանին, Հակոբ Կոջոյանին, Տաճատ Խաչվանքյանին, Միքայել Արուտչյանին և այլոց, որոնց շնորհիվ գրքի ձևավորման հայկական բազմադարյան ավանդույթները հարստացան նոր ձևերով ու արտահայտչամիջոցներով: «Նա գեղանկարչության պատմությունը գիտեր մասնագետի նման և, որ առանձնապես կարևոր է, զգում էր գեղանկարչությունը՝ դա նրա վեցերորդ զգայարանն էր⁹»: Մարտիրոս Սարյանի այս խոսքերը հաստատում են Չարենցի շնորհիվ բարձրարժեք ձևավորումներով հրատարակված բազմաթիվ գրքերը: Արվեստի պատմության մեծ գիտակ և արվեստի նուրբ ընկալմամբ օժտված Չարենցը բարձր էր գնահատում Միքայել Արուտչյանի բազմակողմանի գիտելիքները: «Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի մշակութային կենտրոններում նա սովորել էր ոչ միայն նկարչություն ու լեզուներ, այլև ստացել էր հումանիտար-համալսարանական կրթություն: Տարբեր ժողովուրդների ու տարբեր ժամանակների կերպարվեստի, թատրոնի, երաժշտության պատմությունը և արվեստի տեսությունը շատ լավ գիտենալու հետ մեկտեղ, Արուտչյանը հիանալի պատրաստություն ուներ համաշխարհային գրականության պատմության ու տեսության ասպարեզում և, ինչպես ասում են, գրքի մարդ էր¹⁰»: Այդ իսկ պատճառով Արուտչյանի մատենանկարչության ռեպերտուարն այդքան լայն է, այն ընդգրկում է հայ, ռուս և եվրոպական հեղինակների ստեղծագործություններ:

Համագործակցության առաջին պտուղներից էին Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթի նկարազարդումները (1931), որին հաջորդեցին բազում գրքեր՝ Միխայիլ Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն» (1933), Միգել Սերվանտեսի «Դոն Կիխոտ» (1934), Ալեքսանդր Պուշկինի «Կապիտանի աղջիկը» (1936) և այլն: Բազմաբնույթ երկերի շարքում ակնհայտ կերպով գերիշխում է նկարչի նախընտրելի սատիրան՝ հատ-

8 1930-ին նրա շնորհիվ ընդլայնվում է՝ վերաժվելով առանձին բաժնի:

9 Սարյան Մ., *Արվեստի մասին*, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 180:

10 Մաթևոսյան Վ., *Երեք կիսադեմ*, Երևան, «Սարգիս Խաչենց», 2002, էջ 141:

կապես քաղաքական սատիրայի ժանրը¹¹, որի սիրահարն էր նաև Չարենցը: Տարիներ անց Արուտչյանն իր հուշերում գրում է. «1934 թվականին «Չարենցի հանձնարարականով Գոսլիտիզդատը պատվիրեց ինձ նկարազարդել «Երկիր Նաիրի» վեպի երկրորդ հրատարակությունը¹²: Ես ուրախությամբ ձեռնամուխ եղա այդ գործին, քանի որ սիրում էի այդ կծու, խորամիտ գիրքը: Չարենցի ներկայությունը Մոսկվայում, մեր զրույցները երկի հերոսների ու պատկերազարդման կարիք ունեցող սիտուացիաների մասին՝ շատ օգնեցին իմ աշխատանքին և գործը ես մատիտով արեցի արագ, ինչպես ասում են, մի շնչով: Արդեն տաս-տասներկու օր անց, ես նկարները ներկայացրեցի ի հաստատություն և սկսեցի դրանք մշակել տուշով»¹³:

Չարենցի այդ շրջանի գործերը, և, մասնավորապես, «Երկիր Նաիրի» վեպը, արտացոլում են ոչ միայն ժամանակի գաղափարական հարցադրումները, այլև սոցիալիստական նոր իրականության և ազգային ինքնության որոնումների բարդույթը: Վեպը, լինելով գեղարվեստական-գաղափարական բազմաշերտ մի երկ, որի ժանրային և բովանդակային հարցերի շուրջ բանավեճերը շարունակվում են մինչ օրս, հարուստ է բնության և քաղաքի, պատմամշակութային կոթողների ու կառույցների, մարդկային կերպարների ու նրանց առօրեական կենցաղի դիպուկ նկարագրություններով, որոնք էլ արվեստագետներին սնունդ են տվել՝ նկարազարդման աշխատանքների համար տրամադրելով երևակայության դրսևորման լայն հնարավորություններ:

«Երկիր Նաիրի» վեպի նկարազարդման այս աշխատանքներն ընթացել են Չարենցի ակտիվ մասնակցությամբ և համատեղ քննարկումներով, որը էականորեն նպաստել է վեպի ոգուն համահունչ ձևավորումների ստեղծմանը: Արուտչյանի հեղինակած էսքիզների շրջերեսներին պահպանվել են Չարենցի ռուսերեն ձեռագիր նշումները, որոնցով նա հաստատել կամ մերժել է տեսարանների ընտրությունը: Ուշագրավ է, որ Չարենցը խստապահանջ կերպով է մոտեցել այս աշխատանքներին. որոշ նմուշների հետևում նրա «Не годится, снять» և «Снять безусловно» մակագրություններն են, որոնք նա արել է, ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով նաև Գոսլիտիզդատ-ի գեղարվեստական խորհրդի կարծիքը: Չարենցը սակայն շռայլ էր նաև իր գովաբանություններում՝ այսպես, օրինակ, էսքիզների շրջերեսին արված «Очень хорошо»,

11 Միքայել Արուտչյանը եղել է նաև 1926–1927 թվականներին Երևանում լույս տեսնող «Կարմիր մոծակ» երգիծական շաբաթաթերթի գլխավոր նկարիչը:

12 Ռուսերեն առաջին հրատարակությունը նկարազարդել է Մարտիրոս Սարյանը՝ 1933 թվականին:

13 **Արուտչյան Ս.**, Չարենցի երկու դիմանկարը (հատվածներ հուշերից), *Սովետական արվեստ*, 1958, հ. 9, էջ 68:

«Замечателен» հաստատումները վկայում են այն մասին, որ Արուտչյանի աշխատանքն անկասկած հավանում էր:

Գրքի երեք բաժինները՝ «Քաղաքը և բնակիչները», «Դեպի Նաիրի» և «Երկիրը Նաիրի» գլուխները սկսվում են համառոտ-հավաքական բովանդակությամբ կառուցված կոմպոզիցիոն անվանաթերթերով: Նկարազարդումները սյուժետային մի քանի դրվագներ են, որտեղ հեղինակը հարազատ է մնացել գրական տեքստին և փորձել է պատկերը վերարտադրել ամենայն մանրամասնությամբ և ճշգրտությամբ: Տեսարաններում ակնհայտորեն իշխում է սուր երգիծական ոճը: Արուտչյանի ուշադրության կենտրոնում վեպի հերոսներն են՝ իրենց կերպարային-հոգեբանական կերտվածքներով. նկարիչը նրանց ներկայացրել է միտումնավոր շեշտված, ցայտուն գծերով, ակտիվ ժեստերով ու դիմախաղով: Կոմպոզիցիաներից շատերը կառուցված են Արուտչյանի արվեստին բնորոշ անկյունագծային դասավորությամբ: Այս ամենի շնորհիվ տեսարանները դինամիկ բնույթն ունեն: Բեմանկարչության մեծ վարպետի թատերական մտածողությունը դրսևորվել է նաև մատենանկարչության այս նմուշներում: «Երկիր Նաիրի» վեպի համար ստեղծված էսքիզներից պահպանվել են միայն տասնմեկը, որոնցից վեցը գտնվում են ԳԱԹ-ում, այդ թվում՝ գրքում չընդգրկված ֆորգացը, իսկ մյուս հինգը՝ Եղիշե Չարենցի տուն-թանգարանում (նկ. 2, 3): Արուտչյանի նկարազարդումները ոչ միայն վիզուալ գեղարվեստական արժեք են հաղորդում գրքին, այլև ընթերցողին հնարավորություն են ընձեռում զգալու վեպի հոգեբանական և գաղափարական լարվածությունը:

«Երկիր Նաիրի» վեպը դարձավ այն երկը, որտեղ մեկտեղվեց երկու արվեստագետների՝ Չարենցի և Արուտչյանի նախընտրելի ստեղծագործական ժանրերից մեկը՝ քաղաքական երգիծանքը: Նրանք հաճախ են դիմել այս ժանրին՝ հումորի, հեգնանքի կամ չափազանցության միջոցով արատները մերկացնելու և քննադատելու նպատակով: Հարկ է հիշել, որ Պետական հրատարակչությունը 1934 թվականին լույս էր ընծայել ռուս գրող Միխայիլ Սալտիկով-Շչեդրինի երգիծական քրոնիկոնը՝ «Մի քաղաքի պատմություն» վիպակը, որի պատասխանատու խմբագիրը Եղիշե Չարենցն էր, իսկ բարձրարժեք նկարազարդումների հեղինակը՝ Միքայել Արուտչյանը¹⁴: Այս փորձն անշուշտ օգնում էր ավելի սերտորեն համագործակցել «Երկիր Նաիրի»-ի շրջանակներում, թեպետ Սալտիկով-Շչեդրինի երկի նկարազարդումներին բնորոշ արուտչյանական սուր լեզուն, գծային և հորինվածքային վիրտուոզությունը, այստեղ ակնհայտորեն նույն կերպ չեն դրսևորվել:

¹⁴ «Մի քաղաքի պատմություն» վիպակի համար 1933 թվականին Արուտչյանի ստեղծած հինգ էսքիզները պահվում են ՀԱՊ-ում:

Արուստյանի գրաֆիկական հարուստ ժառանգության մաս են կազմում նաև գրողների դիմանկարները, որոնց մեծամասնությունը ստեղծվել է որպես ֆրոնտիսպիս: Նա հաճախ էր պատկերում տարբեր գործիչների և հատկապես իր արվեստագետ ընկերներին, որոնց դիմանկարներում զգացվում էր ջերմ վերաբերմունքը դեպի բնորդը: Արուստյանը ստեղծել է Չարենցի երկու գրաֆիկական դիմանկար, որոնցից յուրաքանչյուրն ունի ստեղծման իր պատմությունը: Փոքր-ինչ արտասովոր է Չարենցի առաջին դիմանկարը (1930), որտեղ վերջինս ներկայանում է արտիստիկ՝ հարդարված մազերով, մորթե մուշտակով (նկ. 4): Արուստյանն իր հուշերի դրվագներից մեկում պատմում է, թե ինչպես է Մոսկվայից նոր վերադարձած Չարենցը խնդրել իրեն նկարել նոր գնված մուշտակով՝ Ինտուրիստ հյուրանոցի իր փոքրիկ համարում¹⁵:

Չարենցի դիմանկար-ֆրոնտիսպիսը, որն ըստ Արուստյանի, պոետը հավանության էր արժանացրել և իր ստորագրությունը դրել ներքևում, սակայն ուշ ուղարկվելու պատճառով այն գրքից դուրս է մնացել: Ուշագրավ է հեղինակի՝ Չարենց-բնորդի բնութագիրը: «Չարենցը դժվար պատկերվող մոդել էր: Դեմքը շարժուն էր, դա վերաբերվում է հատկապես նրա սևորակ աչքերին, որոնք չէին սևեռվում մի կետի վրա և մի առարկայից շարունակ մյուսն էին փախչում: Դիմանկարելով Չարենցին, պետք էր որսալ այն ստույգ ու բնորոշ վիճակը, որ դժվար էր բռնել ու դրոշմել թղթի վրա: Ինձ թվում է, որ Չարենցին բնականից նկարած և նմանության հասած ամեն մի նկարչի առաջ կանգնել է այն Չարենցների պատկերը, որոնք ապրել են նկարվող պատկերից դուրս և որոնց կարելի էր նկարել էլի ու էլի և ամեն անգամ գտնելով նորանոր անկրկնելի դիմագծեր ու նրբագծեր, որոնք նման չէին նկարվածներին»¹⁶: Չարենցի թեման անսպառ էր Արուստյանի համար:

Առանձնահատուկ հիշատակության է արժանի 1932 թվականին հրատարակված «Հոկտեմբեր-նոյեմբեր» տարեգիրքը: Գրականության, արվեստի, գիտության և տնտեսության ձեռքբերումներն ամփոփող այս ժողովածուում, որի պատասխանատու խմբագիրն էր Չարենցը, ընդգրկված էր նաև Միքայել Արուստյանի «Կերպարվեստներ» հոդվածը¹⁷: Վերջին 10 տարիների գեղարվեստական զարգացումներն ու նշանակալի գործիչներին ներկայացնելով, հեղինակի գլխավոր միտքն այն էր, որ հարկավոր է գեղարվեստական ժառանգություն կառուցել «նոր իդեոլոգիական բազայի վրա, ներգրավելով նոր, երիտասարդ ուժեր, գաղա-

15 Արուստյան Մ., Չարենցի երկու դիմանկար..., էջ 68:

16 Արուստյան Մ., Չարենցի երկու դիմանկար..., էջ 69:

17 Արուստյան Մ., Կերպարվեստներ, *Տարեգիրք գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության (հոկտեմբեր-նոյեմբեր)*, Երևան, Պետական հրատ., 1932, էջ 186–220:

փարապես ավելի կապված պրոլետարական հեղափոխության հետ»¹⁸։ Այս հոդվածին կից վերատպությունների շարքում տեղ է գտել նաև Միքայել Արուտչյանի հեղինակած պլակատի էսքիզը, որը նույնպես Չարենցի հետ համատեղ աշխատանքի արդյունք էր։ Արվեստը բարձր գնահատող և խորագիտակ Չարենցը հաճախ էր այցելում ցուցահանդեսներ, կարծիք էր հայտնում նկարիչների ու ստեղծագործությունների վերաբերյալ։ Հայտնի է, որ քաղաքական-սատիրական պլակատին նվիրված մի քննարկմանը հիվանդության պատճառով բացակայող զեկուցողին փոխարինում է Չարենցը և թեմայի շուրջ էքսպրոնտ ելույթ է ունենում։ Նա բարձր էր գնահատում պլակատային արվեստը՝ որպես զաղափարների քարոզչամիջոց։ Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում է գտնվում Արուտչյանի հեղինակած պլակատի էսքիզը, որը ստեղծվել է Հայպետհրատի պատվերով՝ Լենինի երկերի վեցհատորյակի տպագրության առթիվ։ Այն ներկայացնում է գրքի վեց հատորները՝ խորհրդանշական կարմիր շապիկով, կենտրոնում խորհրդային առաջնորդի խոշոր ֆիգուրն է, իսկ որպես ֆոն ծառայող ինդուստրիալ տեսարանները Արուտչյանը կոմպոզիցիայում ընդգրկել է ապլիկացիայի մեթոդով։ Այս էսքիզային տարբերակը հաստատվել է Չարենցի կողմից։ Շրջերեսին առկա է նրա գրությունը՝ «ընդունվում է իբրև պրոյեկտ, վերջնական պլակատի տպագրության համար /միանգամայն պատրաստի վիճակում ներկայացնել ամսի 9-ին։ 1941 /VIII. 4/ Չարենց»։ Ցավոք, վերջնական տպագրության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ չգտնվեցին։ Երկար ժամանակ մոռացության մատնված այս էսքիզը միանըշանակ կարելի է դասել խորհրդային շրջանի քարոզչական ազդագրերի լավագույն նմուշների շարքը (նկ. 5)։

Թե՛ Արուտչյանը, թե՛ Չարենցը հաճախ են անդրադարձել Լենինի կերպարին։ Հիշենք առաջնորդին նվիրված Չարենցի բազում երկերը՝ «Ես և Իլյիչը», «Լենինն ու Ալին», «Մահվան քայլերգ» և շատ այլ ստեղծագործություններ։ Արուտչյանը Լենինին ընկալում էր որպես համամարդկային առաջնորդի մոնումենտալ կերպար։ Մինչդեռ Լենինը Չարենցի պոեզիայում պատկերվում է որպես նոր աշխարհի կառուցման խորհրդանիշ, որը հայ իրականությանը ընձեռում էր ազգային ինքնության նորացման հնարավորություն։

«Լենինյան շունչն էր այդ բոլր,
Որ որոտի պես շաչեց,
Մրրիկներում հեռավոր՝
Լեզուների պես բոցե. –

¹⁸ Նույն տեղում, էջ 188։

Մղված ոգով նրա մեծ,
Այդ ժողովուրդն էր ազատ,
Որ նորոգ կյանք տվեց մեզ
Եվ հայրենիք հարազատ:»
(Կոմիտասի հիշատակին, 1929)

Չարենցի և Արուստյանի գործունեությունը թատերական ոլորտում

Ինչպես նշվեց, Չարենցի և Արուստյանի ընդհանուր հետաքրքրության ոլորտներից էր թատրոնը: Բազում նամակներից, հուշերից ու հոդվածներից հայտնի է դեռևս դպրոցական տարիներից¹⁹ բեմական արվեստի հանդեպ պոետի տաժած մեծ սիրո մասին: 1919–1922 թթ. ուսումնառության ընթացքում Չարենցն ակտիվորեն մասնակցում էր Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայի աշխատանքներին, մտերիմ էր ռեժիսորներ Սուրեն Խաչատրյանի և Ռուբեն Սիմոնովի հետ: Նա հիացած էր Եվգենի Վախթանգովի «Արքայադուստր Տուրանդոտ» և Վսևոլոդ Մեյերխոլդի «Տարելկինի մահը» բեմադրություններով: Նույն ժամանակ Միքայել Արուստյանը Սարատովում իր առաջին քայլերն էր անում թատրոնում՝ համագործակցելով հայտնի ռեժիսոր Աբրամ Ռոոմի հետ: 1928 թվականին Արուստյանը նշանակվում է Առաջին պետթատրոնի գլխավոր նկարիչ: Այդ տարիներին Չարենցը ևս մեծ ոգևորությամբ էր մասնակցում պետթատրոնի աշխատանքներին, պիեսներ էր թարգմանում՝ խաղացանկը համալրելու և հարստացնելու նպատակով: Նրա թարգմանությամբ է բեմ բարձրացել Դմիտրի Ֆուրմանովի և Սերգեյ Պոլիվանովի «Խռովություն» ներկայացումը, որը 1928 թվականին բեմադրվել է Արուստյանի ձևավորմամբ: Չարենցը հանդես էր գալիս նաև որպես թատերական քննադատ, տարբեր հավաքույթների ընթացքում կարդում էր գեկույցներ, որտեղ անդրադառնում էր ռեժիսուրայի, դերասանական խաղի և արտաքին ձևավորման խնդիրներին: Ուշագրավ է «Բեկում» պիեսի բեմադրության վերաբերյալ Չարենցի ելույթը: Սոցիալիզմի դիրքերում կանգնած Չարենցն իր խոսքում կարևորում է պիեսի առանցքը հեղափոխական գաղափարները դարձնելն ու տիպաժներին հենց այդ լույսի ներքո ներկայացնելը: Ապա նա անդրադառնում է արտաքին ձևավորմանը. «Միք. Արուստյանը կարողացել է 1-ին և 3-րդ տեսարանների

19 Չարենցի մանկության ընկերիկներից Կարինե Քոթանջյանն իր հուշերում նշում է, որ Կարսում Չարենցը մասնակցում էր աշակերտական թատերական ներկայացումներին: Հետագայում մասնակցում է նաև Վարդան Միրզոյանի թատերական ստուդիայի պարապմունքներին: **Քոթանջյան Կ.**, Հուշեր, *Սովետական արվեստ*, 1967, հ. 9:

ձևավորումը տալ՝ փոքր միջոցներով մեծ արդյունքի հասնելով, սակայն նավի տեսարաններում անտարբեր վերաբերմունք է ցույց տվել դեպի գեղարվեստական ձևավորումը»²⁰:

Չարենցին նվիրած գործերի շարքում բացառիկ է «Տուրանդոտ» պիեսի չինացու զգեստի էսքիզը, որն Արուստյանը ստեղծել է 1926 թվականին Երևանում և նկարչի՝ մեզ հայտնի կատալոգներում երբևէ չի հրատարակվել (նկ. 6): Սա հեղինակի խորհրդանշական նվեր էր Չարենցին: Ուսաստանում 1922-ին ռեժիսոր Եվգենի Վախթանգովի բեմադրած Կարլո Գոցիի «Արքայադուստր Տուրանդոտ» հեքիաթը երևելի իրադարձություն էր այդ տարիների թատերական կյանքում: Իր ուրույն դիմով, պլաստիկայով, խոսքի ու ժեստերի արտահայտչականությամբ այն մեծ տպավորություն է գործել նաև Չարենցի վրա, որը Մոսկվա կատարած այցելությունների ընթացքում ջանում էր բաց չթողնել մշակութային ոչ մի իրադարձություն. հաճախում էր ցուցահանդեսներ, ներկայացումներ ու մասնակցում տարբեր քննարկումների: Վախթանգովյան բեմադրության հաջողությունից ոգևորված՝ «Արքայադուստր Տուրանդոտը» Հայաստանում ներկայացնելու մտադրություն է ունեցել նաև ռեժիսոր Արշակ Բուրջալյանը²¹: Ամենայն հավանականությամբ Արուստյանի էսքիզը նախատեսված է եղել Բուրջալյանի բեմադրության համար, որը, սակայն այդպես էլ բեմ չի բարձրացել: Այն ստեղծված է այդ տարիներին նկարչի արվեստին բնորոշ կոնստրուկտիվիստական սկզբունքներով ու վառ գունային լուծումներով²²: Այս գունաձևերի կիրառությունը կարելի է տեսնել ավելի ուշ՝ Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» կատակերգական պիեսի համար Արուստյանի ստեղծած զգեստների էսքիզներում, որոնք այսօր պահվում են Ազգային պատկերասրահում:

Արուստյանի նվերների շարքում ուշագրավ են նաև նկարչի 1930-ականների սկզբին արված գուաշով և սանգինայով ստեղծված ինքնադիմանկարները և երկու մերկ ֆիգուր ներկայացնող գրաֆիկական թերթերը: Արուստյանի՝ Չարենցին նվիրած այս բոլոր գործերը, ինչպես նաև «Երկիր Նաիրիի» հինգ էսքիզները, Չարենցի տուն-թանգարանի ֆոնդերում գրանցվել են 1975 թվականին՝ որպես Չարենցի անձնական իրեր:

20 **Չարենց Ե.**, *Երկերի ժողովածու (վեց հատորով)*, հատ. 6, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1967, էջ 544:

21 **Բուրջալյան Ա.**, *Հողվածներ, նամակներ. ժամանակակիցները նրա մասին*, Երևան, Հայկական թատերական ընկերություն, 1959, էջ 118–119:

22 Նման սկզբունքներով են ստեղծված 1920-ականների վերջի և 1930-ականների սկզբի Արուստյանի թատերական ձևավորումները «Ինգա», «Քաջ Նազար» և այլ պիեսների համար:

Եզրակացություն

1920–ականներին Հայաստանում վերածնունդը պարարտ հող էր ստեղծել մշակութային ակտիվ կապերի համար: Լինելով անցյալ դարասկզբի նորահաստատ վարչակարգի ջատագովներից ու ակտիվ գործիչներից՝ Չարենցն ու Արուտչյանը սերտորեն համագործակցել են: Մամուլում տեղ գտած Արուտչյանի հոլերից արդեն իսկ կարելի է զգալ այն ջերմ վերաբերմունքն ու հոգևոր հարաբերությունները, որով կապված էին երկու արվեստագետները: Ցավոք թե՛ Չարենցի, թե՛ Արուտչյանի արխիվները մեծ կորուստներ են կրել, որի հետևանքով լուսանկարներ, նամակներ և այլ նյութեր մեզ չեն հասել, որոնք կամբողջացնեին այս երկու գործիչների հարաբերություններն ու ստեղծագործ նախաձեռնությունները:

Արվեստագետի եղբոր որդին՝ գեղանկարիչ Ռուբեն Արուտչյանն իր բանավոր զրույցների ընթացքում հիշատակել է այս սերտ կապի և ընկերական մտերմության մասին՝ նշելով, որ անկարգությունների պատճառով պարբերաբար աղմկահարույց պատմությունների կենտրոնում հայտնվող Չարենցին Միքայել Արուտչյանը հաճախ է օգնության հասել՝ ոստիկանությունում միջնորդելով օգնել նրան ազատ արձակելու գործում²³: Ցավոք թե՛ բանավոր, թե՛ գրավոր հոլերը մեզ հասել են հատվածաբար:

Նրանց համատեղ գաղափարների արդյունքում ծնվել են գրքային գրաֆիկայի, բեմանկարչության և պլակատային արվեստի արժեքավոր նմուշներ: Այս ստեղծագործություններից շատերը ոչ խորհրդային արվեստի արժեքավոր նմուշներից են և կարող են դասվել համաշխարհային գրաֆիկայի լավագույն օրինակների շարքը:

Անշուշտ, այս շարքում կարելի է առանձնացնել Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի ռուսերեն հրատարակության ձևավորումները, որոնց աշխատանքներն ընթացել են երկու արվեստագետների համատեղ քննարկումներով և կենդանի շփման կնիքն են կրում: Նկարագարողուններն աչքի են ընկնում կերպարների դիպուկ բնութագրումներով և սուր հումորով: Երկուսն էլ իրենց արվեստում արձագանքել են ժամանակի սոցիալ-քաղաքական փոփոխություններին, նոր արտահայտչաձևերով հարստացրել գեղարվեստական ավանդույթները:

23 Նկատի ունենք 1926 թ. Մարիաննա Ավագյանի ուղղությամբ Չարենցի՝ կրակելու միջադեպը, որի պատճառով վերջինս ձերբակալվել էր:

YEGHISHE CHARENTS AND MICHAEL ARUTCHIAN. THE FRIENDSHIP AND COOPERATION OF TWO ARTISTS

HAYKUSH (HAYKUHI) SAHAKYAN

Art Historian

National Gallery of Armenia

State Academy of Fine Arts of Armenia

Summary

Owing to the 1920s cultural resurgence in Armenia, a great number of artists arrived in the country from abroad. Among them were Yeghishe Charents and Michael Arutchian, two like-minded, open-minded and well-rounded artists who collaborated in such areas of cultural production as the theater as well as book and periodical publishing.

Fragments of memories and works of art born from this creative collaboration tell the story of both the known and unknown chapters of their lives, bearing eloquent witness to a decade of friendship. These pieces are preserved in the Museum of Literature and Art, the Yeghishe Charents House-Museum, the National Gallery of Armenia, and other institutions. At the suggestion of Charents, the head of the Art Division of Haypethrat, the State Publishing House of Armenia, Michael Arutchian illustrated Hovhannes Tumanyan's fairy tale "Brave Nazar" (1931), Mikhail Saltykov-Shchedrin's "History of a Town" (1933), Miguel de Cervantes' "Don Quixote" (1934), Yeghishe Charents' novel "Land of Nairi" (1935), Alexander Pushkin's novella "The Captain's Daughter" (1936), and other literary works. These illustrations undoubtedly represent valuable examples of Soviet graphic art.

The aim of this article is to present the Charents-Arutchian connection through their fields of activity, putting newly discovered works and information into academic circulation and thus providing vital sources for further research. Comparative and analytical methods allow us to observe the commonalities in their creative approaches, which were also characteristic of Soviet Armenian culture between the 1920s and 1930s. The use of archival documents, including previously unpublished materials, provides an opportunity to explore unique sources, such as graphic works, inscriptions, manuscripts, and so forth, contributing to a deeper understanding of the relationship between Charents and Arutchian.

Keywords: Yeghishe Charents, Michael Arutchian, Land of Nairi, Haypethrat, Armenian book graphics, Armenian scenography, Goslitizdat, First State Theater, Soviet art, art of Soviet Armenia

ЕГИШЕ ЧАРЕНЦ И МИКАЭЛ АРУТЧЬЯН. ДРУЖБА И СОТРУДНИЧЕСТВО ДВУХ ДЕЯТЕЛЕЙ ИСКУССТВА

Айкуш (Айкуи) Саакян

искусствовед

Национальная галерея Армении

Государственная академия художеств Армении

Аннотация

Стремительные общественно–политические перемены, культурный подъем и волна всеобщего пробуждения, начавшаяся в Армении в 1920–е годы, привели сюда многих деятелей, неустанно служивших на благо родной страны. В Армению переехали также писатель Егише Чаренц и художник Микаэл Арутчян. Единомышленники с широким кругозором и разносторонними знаниями, пути этих художников пересекались в различных сферах общественной деятельности и культуры: книгоиздании, изобразительном искусстве, театре, периодической печати и т. д.

Об известных и неизвестных страницах их жизни рассказывают фрагменты воспоминаний и произведения искусства, рожденные в ходе этого творческого сотрудничества, которые являются яркими свидетельствами их десятилетней дружбы и хранятся в Музее литературы и искусства, а также в доме–музее Егише Чаренца, Национальной галерее Армении и других местах. По предложению Чаренца, руководителя художественного отдела Армгосиздата, Микаэл Арутчян проиллюстрировал сказку Ованеса Туманяна «Храбрый Назар» (1931), «Историю одного города» Михаила Салтыкова–Щедрина (1933), «Дон Кихота» Мигеля Сервантеса (1934), роман Егише Чаренца «Страна Наири» (1935), роман Александра Пушкина «Капитанская дочка» (1936) и другие литературные произведения. Эти иллюстрации, несомненно, являются ценными образцами советской графики.

Цель данной статьи – всесторонне представить связь Чаренца и Арутчяна в сферах их деятельности, а также ввести в научный оборот новоявленные работы и сведения, которые могут стать важным источником для дальнейших исследований. Сравнительные и аналитические методы позволяют увидеть общие черты их творческих подходов, характерные для культуры Советской Армении 1920–30–х годов. Использование архивных документов, в том числе ранее неопубликованные материалы, дает возможность изучить уникальные источники, такие как графические работы, надписи, рукописи и т.д.

Ключевые слова: Егише Чаренц, Микаэл Арутюнян, «Страна Наири», армянская книжная графика, армянская сценография, Айпетрат, гослитиздат, первый гостеатр. советское искусство, искусство Советской Армении

Գրականության ցանկ

1. **Աղաբաբյան Ս.**, *Եղիշե Չարենց*, Գիրք երկրորդ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1977:
2. **Արուտչյան Ս.**, Չարենցի երկու դիմանկարը, *Սովետական արվեստ*, 1958, հ. 9:
3. **Բուրջալյան Ա.**, *Հողվածներ, նամակներ. ժամանակակիցները նրա մասին*, Երևան, Հայկական թատերական ընկերություն, 1959:
4. **Արութչյան Ս.**, Կերպարվեստներ, *Տարեգիրք գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության* (հոկտեմբեր-նոյեմբեր), Պետական հրատ., Երևան, 1932:
5. **Մազմանյան Ն.**, *Միքայել Արուտչյան*, Երևան, ՀՊՊ, № 1 տպարան, 1984:
6. **Մաթևոսյան Վ.**, *Երեք կիսադեմ*, Երևան, «Սարգիս Խաչենց», 2002:
7. **Չարենց Ե.**, *Երկերի ժողովածու (վեց հատորով)*, հատ. 6, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1967:
8. **Սարյան Մ.**, Արվեստի մասին, *Սովետական գրող*, 1986:
9. **Քոթանջյան Կ.**, Հուշեր, *Սովետական արվեստ*, 1967, հ. 9:

Արխիվներ և ֆոնդեր

1. Հայաստանի ազգային պատկերասրահ, Հուշաձեռագրային բաժին, Ս. Արուտչյանի ֆոնդ:
2. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Դ. Դզնունու ֆոնդ:
3. Ե. Չարենցի տուն-թանգարանի գեղարվեստական ֆոնդ:

Նկարների ցանկ

1. Միքայել Արուտչյան
2. Մ. Արուտչյան, «Երկիր Նաիրի» վեպի նկարազարդման էսքիզներ, 1934, թուղթ, տուշ, Եղիշե Չարենցի տուն-թանգարան
3. Մ. Արուտչյան, Չարենցի դիմանկարը, 1930, թուղթ, տուշ, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
4. Մ. Արուտչյան, «Երկիր Նաիրի» վեպի նկարազարդման էսքիզներ, 1934, թուղթ, տուշ, Եղիշե Չարենցի տուն-թանգարան
5. Մ. Արուտչյան, Պաստառի էսքիզ, 1941, սովարաթուղթ, ապլիկացիա, գուաշ, տուշ, սպիտականերկ, մատիտ, Հայաստանի ազգային պատկերասրահ
6. Մ. Արուտչյան, Չինացու զգեստի էսքիզ «Տուրանդոտ» պիեսի համար, 1926, թուղթ, կավձամատիտ, Եղիշե Չարենցի տուն-թանգարան


Ընդունվել է՝ 19.08.2024

Գրախոսվել է՝ 12.09.2024

Հանձնվել է տպ.՝ 03.03.2025



1



2



3



4



5



6